

նել եւ մնացեալը, որպէս անբռնաբարելի իրաւունքը՝ յանձնել հողագործին: Հողագործ—աշխատաւոր բնակչութիւնը Սաւալանի մոզերին եւ Ջրաղաշտի վարդապետութեան աւելի մեծ հողով էր փարում, քան թէ հեւքն—հոռմէական քրիստոնէութեան, որը իրա հողի եւ արդիւնարերութեան իրաւունքը չէր պաշտպանում:

Իսլամի՝ գեղական ազգաբնակչութեան մէջ տարածուելուն աւելի նպաստել է Ղուրանի աշարը (տասնորդական հարկը), քան թէ Մահմեդի խոստացած դրախտի մշտնջենական խրախճանքը: Իսլամն էլ այնքան թոյլ էր, արմատներ չէր տարածած ժողովրդի սրտումն, որ միշտ Իսլամի Խալիֆի—Ալլահի շքի դէմ մաքառել ու պայքարել են Ճորոխի աւազանի Բէգերն ու Ասսիները (ասստամբ) հողագործի հետ:

Կիսկիմի հովիտը հնումը բաժնուած է եղել իշխանական տների մէջ, այստեղ իրենց ամբողջները, գանձարանները եւ կանանոցները ունեցել են բոլոր նախարարական տները, բայց գլխաւորապէս այստեղ տարածուած էին Պահլաւներն ու Մամիկոնեանները եւ մեծ կալուածներ սրանք ունէին: Ապա Բագրատունիները Ուղթիքը ձեռք բերելուց յետոյ, Կիսկիմումն էլ կալուածներ գնեցին:

Հայութիւնը այնքան հալածանքների եւ կոտորածների ենթարկուելուց յետոյ, այն—